Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Ծրագրերի համայնքների զարգացման գծով խորհրդատուի ընտրություն

Ժամկետ՝ 11 ամիս (ժամկետի երկարացման հնարավորությամբ)

Ծրագրի մասին: ԱՄՆ ՄԶԳ Տեղական կառավարման բարեփոխումներին ուղղված գործունեությունը կոչված է օժանդակելու ՀՀ-ում տարածքային կառավարման բարեփոխումներին՝ պիլոտային ծրագրերի համար տրամադրելով 8,6 միլիոն դոլար 13 միավորված համայնքներին: Այս գործունեությունը նպատակ է հետապնդում համայնքների միավորման գործընթացում սատարել հանրային ծառայությունների բարելավման, համայնքային ենթակառուցվածքների արդիականացման և համայնքային կարողությունների աճին: ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՏԻՄ բարեփոխումներին» ծրագիրն իրականացնում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

Ծառայության շրջանակը

- Ծրագրերի գեներացիայի փուլում համայնքների կարիքների գնահատում, մրցակցային առավելությունների վերհանում և ծրագրերի առաջարկների ձևավորման գործում նախաձեռնող խմբերին օժանդակության ցուցաբերում:
- Նոր ծրագրերի սոցիալական, տեխնիկական և տնտեսական ոլորտների գնահատում՝ առաջնորդվելով ՀՏԶՀ-ի չափանիշներով:
- Համայնքներում ծրագրերի իրագործման փուլերի մշտադիտարկում, գնահատում, արդյունքներին միտված հաշվետվությունների կազմում:
- Համայնքային կարողությունների բարելավման նպատակով խորհրդատվության իրականացում՝ ինչպես համայնքային ադմինիստրացիաների, այնպես էլ ՀՈԱԿ-ների աշխատակիցների համար:
- Համայնքներում ծրագրի կողմից տրամադրված մեքենաների և սարքավորումների արդյունավետ օգտագործման, համայնքային ծառայությունների բարելավման, աշխատանքների թափանցիկության ապահովման նպատակով խորհրդատվության իրականացում տեղերում:
- Մունիցիպալ կառավարման գործիքակազմի և կարողությունների արդիականացման, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առաջարկների ներկայացում:

- Հանրային և մասնավոր սեկտորների բիզնես համագործակցության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում, կոնկրետ քայլերի և աշխատանքների նախաձեռնում:
- Ծրագրի իրականացման հետևանքով համայնքաբնակների կյանքի որակի փոփոխությունը բնութագրող չափելի ինդիկատորների մշակում և կիրառում:
- Պարբերական հաշվետվություններ կատարված աշխատանքների, առաջացած խնդիրների և ստացած դասերի մասին:

Խորհրդատուի պահանջվող որակավորումները

- ✓ Բարձրագույն կրթություն տնտեսագիտության կամ կառավարման բնագավառում, հետբուհական կրթության առկայությունը խրախուսվում է:
- ✓ Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ համայնքային զարգացման կամ տարածքային զարգացման ծրագրերում:
- ✓ Գիտելիքներ համայնքային զարգացման ծրագրերի վերաբերյալ, համայնքային և տարածքային զարգացման ծրագրերի մշտադիտարկման կարողություններ:
- ✓ Համայնքներ/բնակավայրեր/ այցելելու և իրականացված ծրագրերը գնահատելու կարողություն:
- ✓ Ուժեղ հաղորդակցման ունակություններ. հաղորդակցվելու ունակություն ՏԻՄ, ՀԿ և այլ ոլորտի ներկայացուցիչների հետ:
- ✓ Համակարգչային գիտելիքներ, Windows, օպերացիան համակարգով և MS Office փաթեթի հիմնական ծրագրերով աշխատելու ունակություն:
- ✓ Վարորդական իրավունքի առկայություն՝ առնվազն B կարգ:

Համայնքների զարգացման ծրագրերի գծով խորհրդատուի պահանջվող չափանիշներին բավարարող թեկնածուները պետք է ներկայացնեն իրենց համառոտ ինքնակենսագրականը (CV) անգլերեն և հայերեն տարբերակով, ինչպես նաև կրթությունը և աշխատանքային փորձը հաստատող փաստաթղթերը մինչև **2019 թվականի նոյեմբերի 20-ը ժամը 17:00-ն**, հետևյալ էլ. փոստին՝ procurement@atdf.am :

Միայն կարճ ցուցակում ընդգրկված անձիք կհրավիրվեն հարցազրույցի: